ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 218 - Ա 01 հունիսի 2020թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահի փոփոխության պատճառով գույքի հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սևակ Դվոյան -	Հայաստանի ՀանրապետությանԳեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Բուրմունք Հովհաննսիյան –	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետ
Հրաչիկ Ղալակչյան –	Հայաստանի ՀանրապետությանԳեղարքունիքի Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Հարություն Ասոյան-	հանձնող
Հայկ Սահակյան -	ընդունող

2. Հանձնաժողովին՝ գույքի հանձման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

01.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՅԱՆ

Ք. Գավառ